ԿԱՐԾԻՔ

Վերա Գուրգենի Սահակյանի «Թեշքիլաթ-ը մախսուսա կազմակերպության գործունեությունը Օսմանյան կայսրությունում» թեմայով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրներից, գրականության ցանկից և հավելվածից: Ամբողջ շարադրանքը կազմում է 190 էջ, իսկ հավելվածի հետ՝ 194 էջ:

Ներածության մեջ (էջ 3-21) ատենախոսության հեղինակի կողմից հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում է աշխատանքի հիմնական նպատակներն ու խնդիրները, պարզաբանվում է գիտական նորույթը, հիմնավորվում է աշխատանքի գործնական նշանակությունը, տրվում են թեմայի ժամանակագրական սահմանները և օգտագործված աղբյուրների ու գրականության համառոտ տեսությունը, ինչպես նաև աշխատանքի մեթոդաբանությունը: Հեղինակը փաստում է, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության իշխանության տարիներին «Թեշքիլաթ-ը մախսուսա» կազմակերպութունը (այսուհետ նաև ԹՄ) կարևոր դերակատարություն է ունեցել կառավարման համակարգում և ազգայնական շարժման կազմավորման շրջանում (1919-1922 թթ.):

Ներկայացված են թեմայի հիմնական նպատակները և դրանց հասնելու համար ատենախոսի առջև դրված գիտական խնդիրները:

Ատենախոսը նպատակ է ունեցել.

1. ներկայացնել «Թեշքիլաթ-ը մախսուսա» կազմակերպության գործունեությունը,
2. պարզել կազմակերպության ստեղծման պատճառը, հանգամանքները, գործունեության ժամանակաշրջանը, ոլորտը, նպատակները,
3. ճշտել քանի տեսակի «Թեշքիլաթ-ը մախսուսա» կազմակերպություններ են գործել Օսմանյան կայսրությունում և որ վարչական ատյանի քողի ներքո են գործել,
4. ներկայացնել կազմակերպությունում ներգրավված անդամներին, անձնակազմը,

5. տալ կազմակերպության գործունեության ձևաչափն Առաջին աշխարհամարտի տարիներին՝ հատկապես Կովկասում և Իրանում,
6. պարզել փոխհարաբերություններն այլ նմանատիպ կազմակերպությունների հետ,
7. ներկայացնել ԹՄ կազմակերպության մասնակցությունը հունական բնակչության արտաքսման գործում՝ 1913-1914 թթ. և 1915-1916 թթ. Հայոց ցեղասպանության գործում,

Ատենախոսության ժամանակագրական սահմանները ներկայացնում են 1912-1918 թթ., սակայն երբեմն այն խախտվում է՝ քննարկվող հիմնախնդրի ամբողջականությունը պահպանելու պատճառով:

Աշխատանքում հիմնավորված է ատենախոսության գիտական նորույթը, համալիր կերպով ներկայացված է տարաբնույթ հայ և օտար աղբյուրները, օգտագործվել են հայ և օտար լեզուներով աղբյուրներ ԹՄ կազմակերպության մասին:

Մեթոդաբանական հիմքը կազմում են պատմության հետազոտման պատմահամեմատական, պատմաքննական և պատմավերլուծական մեթոդները:

Ուսումնասիրության համար գիտական աղբյուրագիտական հիմք են ծառայել տարաբնույթ արխիվային նյութերը՝ Նուբարյան մատենադարանի (Ֆրանսիա), Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի Մատենադարանի, Վարչապետության Օսմանյան արխիվի (Թուրքիա), Առաջին համաշխարհային պատերազմի հավաքածուի (Թուրքիա), Գլխավոր շտաբի Ռազմական պատմության և ռազմավարական հետազոտությունների տնօրենության արխիվի (Թուրքիա) վավերագրերը:

Ատենախոսության թեման ներկայացվող բովանդակությամբ և ժամանակագրությամբ նախկինում հետազոտման չի ենթարկվել: Աշխատությունն արժևորվում է նրանում օգտագործված բազում հայագիտական և արտասահմանյան՝ ռուսերեն, անգլերեն և այլ լեզուներով գիտական շրջանառության մեջ դրված սկզբնաղբյուրների մեծածավալ նյութերի և ուսումնասիրությունների ներգրավվածությամբ, ինչը հիմնավորում է գիտական նորույթը:

Ատենախոսության առաջին գլուխը կոչվում է «Օսմանյան կայսրությունը 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին», որը բաղկացած է երեք ենթագլխից (էջ 22 - 52):

Առաջին ենթագլուխը՝ «Քաղաքական զարգացումների և կուսակցությունների ձևավորման հանգամանքները Օսմանյան կայսրությունում»,

քննության են առնված այն հանգամանքները, որի հետևանքով առաջանում է «Իթթիհատ» կուսակցությունը: Տրված են կուսակցության երկու հակադիր հոսանքները՝ լիբերալներ և արմատականներ (էջ 24): Նշվում է 1907 թ. կարևորությունը՝ երիտասարդ թուրքերի, քրիստոնյա ժողովուրդների և քրդերի մասնակցությամբ ընդհանուր հակաիշխանական ճակատ կազմելու ուղղությամբ: Ներկայացվում է 1908 թ. իրականացած «Իթթիհատ» կուսակցության հեղափոխությունը:

Երկրորդ ենթագլխում ներկայացված են «Օսմանյան բանակի արդիկանացման խնդիրները և մանակցությունը Առաջին աշխարհամարտին» (էջ 32-39), որի հենքը համարվում է թուրք-գերմանական համագործակցությունը: Այս առումով կարևորվում է գեներալ-ֆելդմարշալ Կոլմար ֆոն դեր Գոլցի լուման, որը եղել է գերմանական միսիայի ղեկավարը Թուրքիայում:

Երրորդ ենթագլխում՝ «Պանթուրքիզմի գախափարախոսությունը՝ որպես թուրքական ազգային պետականության հիմքը» (էջ 40-52), ներկայացվում և վերլուծվում է պանթուրքիզմի գաղափարախոսությունը: Այն ծնունդ է առել Ռուսական կայսրության տարածքում, իսկ Օսմանյան կայսրություն մուտք է գործել Բաքվից (էջ 42): Վերջինս կարողանում է հաղթահարել իր ախոյաններին՝ պանօսմանիզմին և պանիսլամիզմին:

«Թեշքիլաթ-ը մախսուսա» կազմակերպությունը Կովկասի ուղղությունում քարոզում էր պանթուրքական գաղափարները և թուրքական ժողովորդների միավորման անհրաժեշտությունը Օղուզիստանի շրջանակում, կամ Կովկասում մեծ մահմեդական պետության ստեղծումը (էջ 52):

Ատենախոսության երկրորդ գլուխը «Թեշքիլաթ-ը մախսուսա կազմակերպության գործունեությունն Առաջինն աշխարհամարտի տարիներին արևելյան նահանգներում և Կովկասի ուղղությամբ» (Kafkas misyons) ունի չորս ենթագլուխ (էջ 53 -111): Առաջին ենթագլխում դիտարկվում են հետևյալ խնդիրները՝ ԹՄ կազմակերպության ստեղծման դրդապատճառները, Էրզերումի, Վանի և Տրապիզոնի շտաբերի ձևավորումը, Գերմանիայի նպատակները Կովկասի նկատմամբ, երկու տեսակ թեշքիլեթների մեկ կենտրոնից կապը, ԹՄ կազմակերպության վերջնական նպատակը:

Այս ենթագլխում տրված է «Թեշքիլաթ-ը մախսուսա կազմակերպության» ստեղծումը 1912 թ. նոյեմբերի 30-ին, որի նպատակն էր «Հայրենիքի պաշտպանությունը»:

Ատենախոսն արդարացի կերպով ԹՄ կազմակերպությունը բնորոշում է որպես «Ֆիդայիների միություն»՝ ստեղծված 1911-1912 թթ. թուրք-իտալական պատերազմի պահանջների համար և տարբերակում է հետագայում Բալկանյան պատերազմների (1912-1913 թթ.) ընթացքում ձևավորված կազմակերպություններից, որոնք ենթակա էին Էնվերին և Թալեաթին (էջ 54, 55, 61):

Երկրորդ, երրորդ և չորրորդ ենթագլուխներում տրված են Էրզրումի, Վանի և Տրապիզոնի շտաբների կազմակերպումը: Շարադրված նյութն ունի պատմաքննական և վերլուծական բնույթ, որը ճշգրտում է հայ պատմական բնակավայր-շրջաններում նրանց գործունեությունը և «վաստակը», ինչպես նաև նրանց գործնեությունն Անդրկովկասում և Հյուսիսային Կովկասում, Օսմանյան կայսրության արևելյան տարածքներում (էջ 79-111):

Ատենախոսության երրորդ գլխում «Թեշքիլաթ-ը մախսուսա» կազմակերպության դերն ազգային պետության ստեղծեման գործում» (էջ 112-164) ներկայացվում և մանրամասն քննության են առնվում նրա գործնեության ավարտական շրջանը: Երրորդ գլուխը ներառում է չորս ենթագլուխ:

1914-1918 թթ. Օսմանյան կայսրությունը մարտնչում էր տարբեր ռազմաճակատներում՝ Դարդանել, Սիրիա, Իրաք և Արևելյան (ռուսական), որտեղ ընդգրկված էին ԹՄ կազմակերպության Ռումելիայի, Կովկասի, Աֆրիկայի և Էրզրումի ստորաբաժանումները՝ իրենց կենտրոններով: Այդ կապակցությամբ առաջին ենթագլխում քննարկվում են ԹՄ կազմակերպության մասնաճյուղերը, անձնակազմը և աստիճանակարգը, համալրման կարգը և ֆինանսավորումը: Այս առումով օգտագործվել են 1919-1920 թթ. երիտթուրքերի Ստամբուլյան դատավարության նյութերը:

Պարզվում է, որ ԹՄ կամակերպությունն ունեցել է վարչական երկու մարմին՝ գաղտնի և բացահայտ: Ներկայացված են ղեկավարների զգալի ինքնուրույնությունը, կազմակերպության ֆինանսավորումը պետական բյուջեից և գաղտնի միջոցներից, այդ թվում հայերից հափշտակված հարստությունից:

Երկրորդ ենթագլխում ատենախոսը տալիս է ԹՄ կազմակերպության գործնեության ուսումնասիրման հինգ ժամանագրական շրջան՝ առաջին շրջան՝ մինչև 1960-ական թթ., երկրորդ շրջան՝ 1950-1990-ական թթ., եր-

որդ շրջան՝ 1990-2000-ական թթ., չորրորդ շրջան՝ 2000-2015 թթ., հինգերորդ շրջան՝ տրվում է 2015-ից մինչ օրս առանցքային ժխտողական մոտեցումները։

Ատենախոսությունում ժխտվում է մի վարկած, ըստ որի ԹՄ կազմակերպությունը 1915 թ. ապրիլի 5-ից անվանափոխվել է՝ ստանալով «Ումուր-ը շարքիյյե դաիրեսի» անունը (Արևելյան գործերի գրասենյակ), սակայն վավերագրերում նշվում է ԹՄ կազմակերպութունը «Թեշքիլաթ-ը մախսուսայի գերագույն տնօրենություն», կամ «Թեշքիլաթ-ը մախսուսայի վարչության տնօրենություն» և այլն (էջ 133, 134)։ Ատենախոսը ելնելով Ստամբուլի դատական նյութերից հաստատում է ԹՄ կազմակերպության պահպանումը, որը ստանում էր հրամաններ Ստամբուլում ստեղծված հատուկ կենտրոնից, իսկ նրա որոշումները հաստատվում էին ռազմական շտաբի և Ստամբուլի կենտրոնի պատասխանատու Ջևադ բեյի կողմից։

Երրորդ գլխում ներկայացվում է «Թեշքիլաթ-ը մախսուսա կազմակերպության մասնակցությունը Հաց ցեղասպանությանը», որի հիմքում Ա. Անտոնյանի հրատարակված վավերագրերն են՝ ձեռք բերված Հալեպի գաղթականների տեսչության գլխավոր քարտուղար Նաիմ բեյից, որոնք հայտնի են նաև «Թալեաթ փաշայի հեռագրեր» անունով, մերժելով զեղծարարների պնդումները, թե պետությունը չի կազմակերպել Հայոց ցեղասպանությունը։ Ինչը բնորոշ է նաև արդի «Թուրքիայի պատմագիտական ընկերությանը»։ Նույնը վերաբերվում է XXI դարի սկզբում հրատարակվող արխիվային նյութերին, որտեղ նշվում է 1.973,522 հայ Թուրքիայում, որոնց կառավարությունը արտաքսել է երկրից։ Մինչդեռ ԹՄ կազմակերպության ջոկատները հակահայկական գործնեություն են իրականացրել 1913, 1914, 1915 թվականներին (էջ 138-145, 151-152)։

Չորրորդ ենթագլխում վերլուծվում են «Թեշքիլաթ-ը մախսուսա կազմակերպության» լուծարման առնչությամբ եղած վարկածները։ Նշվում է, որ ԹՄ անդամները ընդգրկվում են այլ կազմակերպությունների մեջ, իսկ հետագայում ծառայության են անցնում քեմալական իշխանության համակարգում։

Եզրակացության բաժնում տրված են ատենախոսության հիմնական դրույթները և եզրահանգումները։

Ըստ արժանվույն գնահատելով կատարված դրական աշխատանքը՝ ներկայացնենք ատենախոսության վերաբերյալ մեր դիտարկումները.

1. Ատենախոսությունում օգտագործված չեն թեմային առնչվող հետևյալ կարևոր աշխատությունները՝ Կյամորան Գյուրյունի «Հայկական դոսիեն», Գյունթեր Լևի «Հայկական հարցը Օսմանյան կայսրությունում. առասպելներ և իրականություն»[1], Մեվլան զադե Ռիֆատի «Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և Իթթիհատի Հայաջինջ ծրագրերը», ինչպես նաև մեր՝ Վ. Թունյանի աշխատությունները[2]:
2. Ատենախոսությունում մանրամասնված չեն հայերի ցեղասպանության հիմնական պատճառները՝ հայերը, որոնք համարվում էին Օսմանյան կայսրությունում «Millet-i sadika» (հավատարիմ ազգ), արդյո՞ք առիթ տվել էին ցեղասպանության համար, թե ոչ:
3. Ատեմախոսությունում ներկայացված չէ 1914 թ. օգոստոսի 2-ի «Իթթիհատ» կուսակցության Կենտկոմի որոշումը՝ «Հատուկ կազմակերպություն» (Թեշքիլաթ-ը մախսուսա) ստեղծելու վերաբերյալ, որը կգործեր «թշնամական հողում»[3]:
4. Ատենախոսություն ներկայացված չէ «Իթթիհաթի» «Գործադիր կոմիտեի» առաջին նիստը՝ 1914 թ. հոկտեմբերին՝ նվիրված Հայոց ցեղասպանության իրականացմանը և հայաբնակ տարածքների բաժանմանը երեք գոտիների՝ Արևելյան Անատոլիա, Կիլիկիա և Արեմտյան Անատոլիա, ինչպես նաև անդրադարձ չկա հայության արտաքսմանը[4]:
5. Ըստ ատենախոսի «Եզրակացության» բաժնում «Թեշքիլաթ-ը մախսուսա» կազմակերպութուն գոյություն է ունեցել 1912-1922 թթ: Ներկայացվում է գործունեության երեք շրջանները՝ առաջին՝ 1911-1913 թթ, երկրորդ՝ 1914-1918 թթ., երրորդ՝ 1918-1922 թթ. (էջ 166), մինչ դեռ ատենախոսության էջ 165-ում գործունեության սկիզբը նշվում է 1912-1913 թվականը:

---

[1] Гюнтер Леви, Армянский вопрос в Османской империи: мифы и реальность, Москва, «РОССПЭН», 2016, 360 с. - Հայագիտության հարցեր, 2017, N 3:

[2] Тунян В. “Особая организация” и геноцид армян 1915 г.- Вопросы истории и историографии геноцида армян, 2003, N 7; Младотурки: причины геноцида армян и способ осуществления (1908-1915). – Вопросы истории и историографии Геноцида армян 2006, N 13; Миф “общей истории” Р. Эрдогана и геноцид армян. - Журнал исследований геноцида 2020, N 1; Антитезисы Геноцида армян .- История и политика.2020, N 3 и т.д..

[3] Тунян В. Г.Младотурки и Армянский вопрос 1912-1914, Ереван, 2005,ч. 2,с.465, 466, 473-475, 516; ч .3, 2010, с.4, 7, 8.

[4] Тунян В,Г. Искажение истории Армянского вопроса и Геноцида армян в турецкой историографии конец XX в.-начало XIX в. Ереван, 2022, с.86-89.

Միգուցե դա տեխնիկական վրիպում է:

Այնուհանդերձ, նշված դիտարկումները չեն նսեմացնում Վերա Գուրգենի Սահակյանի գիտական ուսումնասիրության արժեքը: Քննարկման ներկայացված ատենախոսությունն աղբյուրագիտական մեծ բազա է պարունակում, որը կարևոր է հիմնախնդրի ուսումնասիրման և գիտական հետազոտման տեսանկյունից:

Վերա Գուրգենի Սահակյանի կողմից հրապարակած գիտական հոդվածներն ու սեղմագիրը համապատասխանում են հետազոտության բովանդակությանն ու ատենախոսությունում արծարծված հիմնական դրույթներին: Աշխատանքը շարադրված է գրագետ, պահպանված են խնդրի լուսաբանման հաջորդականությունը:

Հետևաբար, Վերա Գուրգենի Սահակյանին հաջողվել է ստեղծել գիտական մի աշխատանք, որը լիովին համապատասխանում է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայեցմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ Վալերի Գեորգի Թունյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
առաջատար գիտաշխատող, պ.գ.դ., պրոֆեսոր

Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտքարտուղար պ.գ.թ., դոցենտ Հ. Ղ. Մուրադյան
25 հունիսի, 2024 թ.

Scanned with MOBILE SCANNER